



“ԹՈՂ ՅՈՒԷՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ՊԱՆ.” ԴՈՒԿ ԺԸ 16

ՀԱՏՈՐ ԼԲ.

ԿՈՍՏԱՆՆՊՈԼԻՍ, ՅՈՒՆՈՒԱՐ 1, 1903

ԹԻՒ 1

ԵՍԹԵՐ ԹԱԳՈՒՀԻՆ

Մէկը այն սակաւաթիւ կիներէն որոնց երևելի տեղ մը կը սրուի Հին Կտակարանին մէջ, է Եսթեր, Ասուերոս թագաւորին գեղեցիկ թագուհին: Եւ որչափ կրնանք դատել անոր համառօտ պատմութենէն, անոր նկարագիրն ալ գեղեցիկ էր դէմքին պէս: Եսթեր և Հուսթ կը ցուցնեն թէ պարտականութիւններու և բարեկամներու հանդէպ առաքիւնութիւնը և հաւատարմութիւնը որչափ կը զարդարեն կին մը, աշխարհիս մէջ անոր դիրքը ինչ որ ալ ըլլայ: Այս պատկերը կը լուսարանէ Պարսկական հին սովորութիւն մը: Երբ մէկը թագաւորին մտենար խնդրուած մատուցանելու համար, եթէ նորին վեհափառութիւնը խնդրուած մատուցանողին շնորհք ընել ուզէր, իր դաւազանը անոր կ'երկրնցնէր:

Եթէ մենք ալ խոնարհութեամբ և անկեղծութեամբ ներկայանանք բոլոր մարդոց թագաւորին, մեր Երկնաւոր Հօրը, առջև, և խնդրենք անկէ որ ներէ մեր անցեալ մեղքերը, և օգնէ մեզի պագայ օրերուն համար, ան մեզ պիտի ընդունի մարդասիրաբար:

Անկա իբր թէ պիտի երկնցնէ իր դաւազանը մեզի և ըսէ, «Ուզածդ թնչ է», և ինչ որ խնդրենք անկեղծութեամբ և ուղիղ հոգիով, պիտի ընդունինք, եթէ մեր խնդրածը իսկապէս օգտակար ըլլայ մեզի:

ՊԵՐՃԻ ՏԱՏՐԱԿԸ

Փոքրիկ Պերճ երբ օր մը մորմ կը ժողվէր դաշտին մէջ, գտաւ տատարակ մը որուն թևը կտորուած էր: Տուն տարաւ զանիկա, և կտորուած թևը



ամուր մը կապեց տատարակին կուշտը կտաւի նեղ կտորով մը: Շուտով առողջացաւ թռչունին թևը առաջուան պէս, և տատարակը կրնար նորէն թռչնել: Բայց անկա չէր ուզեր Պերճի քովէն հեռանալ, վասն զի շատ ընտանեցած էր: Պերճ ուրախ եղաւ զանիկա իր քով պահելով, վասն զի խաղալիկ կամ ընտանի կենդանիներ չունէր: Երբ Պերճ մորմ ժողվել կ'երթար, տատարակն ալ անոր հետ կ'երթար անոր ուր նստած: Պերճ զանի-


կա Պարիկ անուանեց և անոր սորվեցուց դալ իր կանչած ատեն և կերուտել իր ձեռքէն: Գիշերները տատարակը Պերճի անկողնին գլխուն վերևը կը թառէր:

Պերճի մայրը ստատիկ հիւանդացաւ: Պերճէ զատ չկար ուրիշ մէկը որ կերակրէր զանիկա, և երբ մայրը չէր կրնար ուտել և սկսաւ աւելի սկաւրանալ, Պերճ բժիշկի գնաց: «Մայրդ կ'աղէկնայ եթէ ազէկ կերակուր ուտէ. պէտք է որ վառեակ և կամ մսի

չուրի վրայ եփուած ապուր ուտէ՝ ըսաւ բժիշկը : Պերճ ստակ չունէր որ միս գնէր, բայց իսկոյն իր տատրակը միտքը եկաւ : Գիտէր թէ անով լաւ ապուր կրնար պատրաստուիլ : Բայց սիրաբ չէր գիմանար զանհկա մորթելու : Տեսաւ որ իրենց դրացի կինը, ընէ մէկը կ'անցնէր տանը քովէն : և ինք դուրս ելաւ ու տատրակը ձեռքը բռնելով ըսաւ անոր, «Հաճեցե՞ք մորթել տատրակս և անկէ մօրս ապուր չիմել : շատ հիւանդ է ան» ըսաւ : Այնուհետև տուն վազեց և ջանաց չմտածել իր խեղճ պզտիկ տատրակին վրայ : Չուզեց որ մայրը տեսնէր իր լաւը, վասն զի պիտի ըսէր որ չմորթուի տատրակը : Իր բժամ մը յետոյ դրացին բերաւ լաւ տաք ապուր : և երբ Պերճի մայրը կերաւ զանհկա, գրեթէ նորէն առողջացած զգաց ինքզինք, «Վաղն ալ պէտք է որ ուտէք այս ապուրէն, ես ամէն օր ձեզի ապուր պիտի պատրաստեմ մինչև որ աղէկնաք» ըսաւ դրացի կինը : Պերճ կնոջ ետևէն գնաց դէպի դուռը, երբ ան դուրս կ'ելլէր : այնպէս որ իր մայրը չկրնայ լսել, և ըսաւ թէ ինք ուրիշ տատրակներ չունէր և չէր գիտեր թէ ինչպէս միս պիտի ունենար ուրիշ ապուրի համար :

Դրացիին խօսելէն առաջ ահա թեւերու բաղխիւն մը լըսուեցաւ, և Պարիկ ներս թըռաւ և նստաւ Պերճի ուսին վրայ : «Բու քու» ըսաւ թըռչունը կտցելով Պերճի այտը : «Տես, չմորթեցի տատրակդ» ըսաւ դրացին, «ես ապուրը իմ մէկ վառեակէս չիմեցի, և ես դեռ շատ մը ուրիշ վառեակներ ունիմ տունը : Դուն բարի տղայ մը եղար սեզելով քու սիրական տատրակդ մորթել քու մօրդ ապուր եփելու համար» :

Ինչպէս երջանիկ եղաւ Պերճ : Իր տատրակը առաջուրնէ շատ աւելի սիրեց հիմա, երբ զանհկա նորէն ձեռք բերաւ : Մայրը մինչև որ բորովին չառողջացաւ, չիմացաւ թէ քիչ մնացած էր որ պիտի ուտէր խեղճ փաքրիկ տատրակը :




ԿՐՕՆԱԿԱՆ ՏԵՏՐԱԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
Մեծ մասն այն պատկերներէն զորոնք վերջերս գործածած ենք Տղայոց Աւետարանին մէջ, ընդունուած են լոն-

տոնի կրօնական Տետրակի ընկերութենէն, որ մեզմէ կը պահանջէ պատկերի ելեկտրաձայլ կաղապարները չի ներու ծախքը միայն : Մեր առջև չունինք յիշեալ ընկերութեան վերջին տեղեկագիրը : Բայց քանի մը տարի առաջ մէկ տարուան մէջ անհկա հանց 1,054,990 կազմուած գիրքեր և տետրակներ, մեծ ու փոքր : Հանած է 62,696,190 հրատարակութիւններ, որոնք չըջարեութեան ելած են կամ բոլորովին ձրի և կամ շատ զեղչուած

թէ իր ֆիզիքական տկարութեան, յաճախ հրաշքներ կը գործէ : Անգղիերէն թերթ մը, Գլուշ Էրուէնթ, այս ճշմարտութեան օրինակ կը բերէ Սըր Այզաք Հոլտընը, որ մօտերս մեռաւ : Անգղիոյ մէջ գրեթէ 90 տարեկան, և որ էր միլիոնատէր, մարդասէր և անգամ Խորհրդարանի Ան կրթեց ինքզինք : Այնպէս տկարակազմ էր որ երբ գործի գնաց իբրև տղայ մը, ըսաւ գործատէրոջ, «Առաւօտուն երկու ժամ տուէք ին-



գնով : Հոս կը ցուցուի այն չէնքը ուրուն մէջ ասոնք կը հրատարակուին : Սըր Պոզոսի մայր եկեղեցիին մօտ է, փողոցի մը մէջ ուր կը գտնուին հրատարակութեանց քանի մը չէնքեր, որոնց մին է Բրիտանական Աստուածաշնչի ընկերութեան չէնքը : Ասոր մէջ երեք, չորս միլիոն Աստուածաշնչ կամ Աստուածաշնչի մասեր կը հրատարակուին ամէն տարի, գրեթէ 300 տարեք լեզուներով :



ՀԱՍՏՈՒԱԿ ՓԱՓՈՒԿ ՄԱՐՄՆԻՆ
Ոչ ոք գիտէ թէ տղայ մը ո՞րչափ առողջ և զօրաւոր կ'ըլլայ եթէ իր միտքը իր գործին տայ : Մինչև անգամ փափուկ տղայ մը, եթէ ունի բաւական զօրաւոր կամք, որ կը յաղ-

ծի : Առաջին անգամ անոր առաջարկութիւնը մերժուեցաւ ծաղրով : Ըսաւ, «Ես գործելու համար այնպէս զօրաւոր չեմ որ կարենամ ձեր ուզածին պէս գործել, եթէ օրը երկու ժամ մարմնամարզի չտամ : Եթէ փորձէք դիս, և գտնէք որ չեմ գործեր ձեր միւս գործաւորներուն ուէ մէկէն աւելի, ինծի տալով հանդերձ ուզած երկու ժամերս, կրնաք դիս արձակել և տեղս ուրիշը դնել» : Անոր խելքը և նկարագիրը արդէն ծանօթ ըլլալով իր գործատէրոջ, սա մտածելէ ետքը ընդունեց զայն իր գործին մէջ : Եւ տղան բոլոր իր կեանքին մէջ երկու մարդու գործ կը տեսնէր : Բայց միևնոյն ատեն ամէն օր կը քալէր երկու ժամ և միջին հաշուով ժամը չորս


մզոն (6 1/2 հազարամետր), Անգղիոյ հարթ ճամբաներուն վրայ:

ԵՐԿՈՒ ՓՈՔՐ ՊԱՏԿԵՐՆԵՐ

Հոս երկու պատկերներ մէկտեղ կը դնենք, թէպէտ անոնք շատ տարբեր առարկաներու կը վերաբերին: Պատկերներէն մին կը ցուցնէ սուղակի (սալ-



կըճ) նոր տեսակ կազմած մը: Կոտանդնուպոսոյ և Զմիւռնիոյ տղաք թերևս երբեմն տեսած են ջուրը մարտուելու պատրաստ սուղակ մը: Կայ մետաղեայ սաղաւարտ մը որ ապակի պատուհաններ ունի, որոնց մէջէն կը տեսնէ սուղակը, և ձգախիժէ երկայն խողովակ մը որուն մէջէն անիկա օդ կ'ընդունի վերէն: Հոս տեսնուած կազմածին մէջ ձգախիժէ խողովակը դանց եղած է: Սուղակը իր կռնակը ունի տուփ մը, որուն մէջ կայ ստապի փէրոքսիտ կոչուած նիւթը: Երբ ջուրը ասոր վրայ կաթի, մարդուն համար թթուածին կ'ելլէ շնչելու, և անոր դուրս շնչած թունաւոր օդը կը ծծուի այդ նիւթէն: Այս կազմածը տակաւին ընդհանրացած չէ գործածուելու համար, բայց հնարիչը կ'ըսէ թէ անոր միջոցով մարդ կրնայ ժամ մը աշխատիլ առանց ջուրին մակերեսը ելլելու:



Միւս պատկերը կը ներկայացնէ կոշիկ ներկելու ինքնաշարժ գործիք մը: Գործիքը ինքիւրեն կը գործէ երեկտրականութեամբ շարժելով: Մարդը ծակին մէջ կը ձգէ վճարուելու ստակը, և ասիկա շարժման մէջ կը դնէ մեքենան: Երեք զսպանակներ կան: Մարդը իր կոշիկը առաջինին մէջ կը

դնէ և տիղմը կը մաքրուի: Երկրորդին մէջ կը դնէ և անիկա սև կը ներկուի, և երրորդին մէջ կը փայլեցուի:

ՊԱՏ. ՃԱՆ ՓԷՅՔԸՆ

ԵՒ ՆՈՐ ՀԵՐԲԻՏԵԱՆՆԵՐԸ

Ճան ճ. Փէյթըն ծերունի միսիոնարը հետեւեալը կը գրէ Եւոյ փէթը: Ուրի թերթին.

Երբ հօրս տունը կը գտնուէի, մենք, տղաքս, առաւօտ և երեկոյ ընտանեկան աղօթքներու մէջ կը լսէինք որ մեր հայրը Աստուծոյ կ'աղաչէր կռակաշուններուն դարձին համար այնքան թախանձազին, որ շատ անգամ կը խօսէինք այդ նիւթին վրայ, երբ տղաքներս մէկտեղ կու գայինք, և կը խօսակցէինք ֆրիտանէական կրօնքին գիտութեանէն զուրկ գտնուողներուն ցաւալի վիճակին վրայով: Յաճախ փափաք կը յայտնէինք որ կա՞րող ըլլայինք օգնել անոնց՝ նպաստ դրկելով մեր ունեցածներէն: Եւ մարդը չէր կարող թողուցի արհեստս, որոչա՞ծ ըլլալով ինքզինքս յարմարցնել քարոզչութեան պաշտօնին: Եւ վերջապէս հօրս տղոցմէն երեքս, ի պատասխան անոր աղօթքներուն, քարոզչութիւնը մեզի պաշտօն ընտրեցինք, և Աստուծոյ օգնութեամբ պատրաստութեան կատարեալ ընթացքի մը հետեւեցանք: Աստուածաբանութեան նախապատրաստական ընթացքիս հետ բժշկական ուսումներու ալ հետեւած ըլլալով, որոշեցի կռակաշուն երկրի մը միսիոնար ըլլալ: Ես այն ատեն կլասքոյի մէջ քարոզչական յանգի պաշտօն մը ունէի, և շատ երջանիկ էի, բայց գիշեր ցերեկ կարծես կը լսէի աղաղակն անոնց որ հեռուն կը գրտնուէին և մէկը չկար որ անոնց պատմէր մեր փրկչին անոնց վրայ ունեցած խնամքը: Բոլոր բարեկամներս կը հակառակէին կլասքոյի իմ եկեղեցւոյս գործը և Աստուածաշնչի դասերը ձգելու, վախճալով թէ գործը հովիւրուն պիտի ցրուի: Բայց ես կը զգայի թէ Աստուած հոգ պիտի տանէր անոր: Եւ չուսահատեցայ: Ասկէ դատ, կը խորհէի թէ անոնք կլասքոյի մէջ ունէին կիրակնօրեայ դպրոցներ և եկեղեցիներ, և ունէին բաց Աստուածաշունչը և կը կարդային զայն իրենց լեզուով, մինչ կռակաշունները կը կորսուէին խաւարին մէջ, տգէտ ըլլալով Յիսուսի և անոր օրհնեալ փրկութեան վրայ: Ինձի առաջարկուեցաւ միսիոնարական կայան մը Ճամայիքայի մէջ, բայց չուզեցի երթալ հոն, աւելի կ'ուզէի երթալ Նոր

Հերթեան կողմները, վասն զի, որչափ որ գիտէի, անոնք ամէնէն խաւար և ամէնէն վայրենի երկիրներէն էին կռակաշուն աշխարհին մէջ: Որոշեցի աւարտել բժշկական ընթացքս որպէս զի աւելի օգտակար ըլլայի վայրենիներուն մէջ: Մեր եկեղեցին Տր. Ինկլըը զրկած էր Նոր Հերթեանները, և կարելի ամէն ջանք ըրած էր մէկ երկու հոգի ևս զրկել անոր գործակից ըլլալու համար, բայց յաջողած չէր: Յաջորդ եկեղեցական ժողովին մէջ եռանդուն աղօթքներէ ետքը վիճակ ձգուեցաւ որպէս զի ամէնէն շատ քուէ շահող պաշտօնեաներէն երկուքը հոն զրկուին: Զգտնուեցան երկու հոգի որ այնքան քուէ շահած ըլլային, այնպէս որ երևնար թէ անոնք Աստուծոյ կանչուած են անոր այս գործին համար: Այլքերս արցունքով լեցուած նստայ հոն, և կը փափաքէի ըսել, «Ահաւասիկ եմ, զիս զրկէ:» Բայց սպասեցի, ցուցնելու համար թէ աճապարած և առանց մտածելու որոշած չէի: Այնուհետև ինքզինքս առաջարկեցի, նոյնպէս ըրաւ իմ դասընկերս ալ: Զգուշաւոր քննութիւններէ և պատրաստութիւններէ ետքը գացինք աւելի քան քառասունուերկու տարի առաջ Նոր Հերթեաններու Առաքելութիւնը: Երբունի անձ մը, որ կը հակառակէր երթալուս, ըսաւ, «Մարդակերները ձեզ պիտի ուտեն, պարոն:» Ես պատասխանեցի, «Եւ դուք ծերացած էք, և չուտով որդերը պիտի ուտեն ձեզ: Ի՞նչ է տարբերութիւնը մարդակերներուն զիս ուտելուն և որդերուն ձեզ ուտելուն մէջտեղ:»

Նոր Հերթեանները հասնելով գտանք բնակիչները, այլ, կին և տղայ, ներկուած վայրենիներ, առանց հանդերձի և առանց դուրսը լեզուի: Հիմա Նոր Հերթեաններուն մէջ ունինք իբր 300 հասարակ կիրակնօրեայ դպրոցներ, ուր կանոնաւորապէս կը յաճախեն բոլոր ֆրիստոնեայ ծնողքներ և զաւակներ, և որոնց մէջ կը սորվին կարգալ և հասկընալ Մուրը Գիբը և գործադրել անոր սորվեցուցածները: Անոնք ամէնէն ալ կը սիրեն եկեղեցի երթալ, և անոնցմէ ոչ մէկը կիրակնօրեայ դպրոցէն ետ կը մնայ իր մեծ ըլլալը պատճառ բռնելով: Անգամ մը, երբ կը մեկնէի Նոր Հերթեաններէն կարծեմանակի մը համար Ամերիկա այցելելու նպատակով, կղզեցի տղաքն ու աղջիկներն եկան և կ'աղաչէին որ գիտնէին ինձի հետ Ամերիկա կամ Գա

նատա կամ Բրիտանիա տանիմ, վասն զի շատ կը փափաքէին տեսնել սպիտակամորթ տղաքներն ու աղջիկները: «Ինչպէս բարի են անոնք: Ինչպէս կ'աղօթեն Յիսուսի և կը սիրեն զանիկա» ըսին. «Երբ նորէն հոս դառնանք, պիտի ջանանք Յիսուսի ծառայող այն սիրելի սպիտակամորթ տղոց պէս բարի ըլլալ»: Երբ հարցուցի թէ ինչո՞ւ կը խորհէին թէ այն սպիտակամորթ տղաքը բարի են, պատասխանեցին թէ, «Եթէ անոնք բարի չըլլային, ձեզ չէին զոկեր մեզի սորվեցնելու և մեզ երջանիկ ընելու համար, ծառայելով Յիսուսի, որպէս զի անոր՝ քով երթանք երբ մեռնինք»: Չկրցի չխորհիլ թէ, «Չեղի համար աւելի ապահով է կենալ ուր կը գրանուիք հիմա, գոցէ պիտի արի ձեր գաղափարը սպիտակամորթ տղոց վրայ, երբ տեսնէք գրեթէ ամէն քաղաքի մէջ անոնցմէ հարիւրաւորներ որոնք կիրակի օրերը ոչ եկեղեցի կ'երթան և ոչ կիրակնօրեայ դպրոց, և ոչ կը մտածեն Աստուծոյ վրայ, որ կ'ըսէ, 'Հանգստութեան օրը միտքդ բեր, զանիկա սուրբ պահելու համար,' և կ'երթան զբոսավայրեր»: Կը յուսամ թէ ընթերցողներէդ ոչ մէկը այսպէս կ'անպատուէ և կը մոռնայ զԱստուծոյ կիրակի օրը: Ոհ, տղաք, ճաշակեցէք և տեսէք որ Աստուծոյ բարի է: Ով որ անոր կը վատահի, կ'օրհնուի ժամանակին և յախտենականութեան համար: Կը մաղթեմ որ այդ օրհնութեան արժանի ըլլաք:

Չեզմէ շատեր գիտեն մարդակերներու կղզիներուն մէջ մեր կանուխուան գործին պատմութիւնը: Գործը կամայ, յառաջ գնաց, բայց, ոհ, ինչ արդիւնք կու տայ: Երբ մեր միսիոնարներէն մէկը կը լսէ թէ իրենց կայաններուն մէջ ուէ անձ մը կը հալածուի, միջոցներ խորհելով կը ջանայ պաշտպանել զանիկա: Նոր Հերիտեաններուն մէջ կռապաշտները յաճախ պատերազմ կ'ունենան իրարու հետ: Եւ պատերազմիկները կ'ուտեն իրենց սպաննածները: Սոսկալի չէ՞ մտածել ասոր վրայ: Երևակայեցէք անգամ մը թէ մեր աշխատաւորները ինչ վտանգներու կը մատնուին Բրիտանիական գործ կատարելու ատեն այսպիսի պարագաներու մէջ, ինծի նիզակներ ուղղուած են, շատ անգամ հրացաններ շտակուած են ինծի զիս զարնելու համար, վայրենիին դանակը շողացած է սրտէս քանի մը մատնաչափ հեռուն: Այսպիսի ժամանակներ ես կրնայի


միայն վեր նայիլ և աղօթել Յիսուսի, որ ամէն իշխանութիւն ունի: Եւ գիտէի թէ ինչ ալ գար իմ վրաս, կըրնայի կռթմիլ անոր խոստմունքին, «Ահա ես ձեզի հետ եմ մինչև աշխարհիս վերջը»: Ես վատահ եմ, նորահասակ բարեկամներս, թէ դուք յաճախ կը յիշէք այս խոստմունքը, և թէ Բրիտանիա կը բնակի ձեր սիրտերուն մէջ, այնպէս որ կը զգաք թէ, թէ՛ կեանք թէ՛ մահ, աղէկ է ձեզի համար:

Անգամ մը մեր կղզիներէն մէկուն մէջ վայրենի ցեղապետ մը փորձեց հրացանով զարնել իմ ամէնէն պղտիկ որդիս որ այդ Առաքելութեան մէջ կ'աշխատէր: Երբ հրացանը վերցուց որդիս զարնելու համար, 4,000 մարդակերներու ցեղապետ մը, զոր որդիս դարձի բերած էր Աստուծոյ օրհնութեամբ, միւս ցեղապետին քով կը գտնուէր և իր բոլոր կրցածն ըրաւ որդւոյս կեանքը ազատելու համար: Յատկեց անոր առջև մինչ կ'արձակուէր հրազէնը: Գնտաղը անցաւ իր մարմնէն որ ինկաւ և ցից բլրէ մը վար գլորեցաւ: Ուրիշ հրացան մը արձակուեցաւ որդւոյս վրայ, այնքան մտէն որ գնտաղը անոր աչքին դպաւ, բայց տեսողութիւնը չկորսուեցաւ: Երբ որդիս լացաւ և աղօթեց մահամերձ ցեղապետին համար, անիկա ըսաւ, «Մի լար ինծի համար: Յիսուս մեռաւ ինծի համար, և ես երջանիկ եմ և կ'երթամ անոր»: Երբ հարցուեցաւ թէ մեծ ցաւ կը զգամ, պատասխանեց, «Ոյո, ես մեծ ցաւ կը զգամ, բայց իմ ցաւս բան մը չէ բաղդատելով այն ցաւին հետ զոր Յիսուս կրեց Գողգոթայի վրայ: Ան ինծի համար մեռաւ»: Մահամերձը իր մնացած բոլոր ոյժը ժողովեց և յորդորեց իր մարդիկը որ մէկը չզարնեն իրեն զարնուելուն վրէժը առնելու համար, այլ ամէն բան թողուն սիրելի Տէր Յիսուսի, օգնեն միսիոնարին ամէն բանի մէջ որ կրնան, յարին Յիսուսի և անոր պաշտամունքին, և հաւատարիմ ըլլան մինչև ի մահ, այնպէս որ երջանկութեամբ մեռնին և անոր քով երթան երկինք: Յետոյ մեռաւ: Յեղապետին մեռնելէն ետքը Բրիտանիական դարձած ժողովուրդէն հարիւր հոգի «Բրիտանիայ Զանա սիրաց ընկերութիւն» մը կազմուեցան, աշխատելու և այդ ամբողջ կղզին Յիսուսի սիրոյն և անոր ծառայութեան առաջնորդելու համար:

Սիրելի նորահասակներ, դուք պիտի հիանայիք և քաջաւերուէիք աղօ-

թել և վատահիլ Աստուծոյ, եթէ տեսնէիք թէ ինչպէս յաճախ և ո՞րչափ շատ կերպերով Աստուծոյ կը լսէ և ուղղակի կը պատասխանէ միսիոնարներուն աղօթքներուն, անոնց օգնելով և զանոնք պաշտպանելով: Հիմա թոյլ տուէք ինծի որ ինդրեմ ձեր աղօթքները և ամէն դրամական օգնութիւնները զոր կրնաք տալ կռապաշտներուն դարձին համար, այնպէս որ ձեր մահուան ատեն Յիսուս ըսէ ձեզի, «Որովհետեւ ոս իմ եղբայրներուս պիտի պղտիկներէն մէկուն ըրիք, ինծի ըրիք»: «Մտիք քու Տէրո՞ւղու ըրախութեանը մէջ»:

Մաղթելով իւրաքանչիւր ընթերցողի ամէն օրհնութիւն, մնամ:



ՆՈՅՆՄԲԵՐԻ ՀԱՆՆԵՆՈՒԿԻՆ ՊԱՏԱՍԽԱՆՐ

Ա	Բ	Ի	Ս	Ն	Ա
Ի	Ս	Ն	Ա	Ա	Ն
Ե	Ր	Ե			
Տ					
Ա	Ն	Ա			
Բ	Վ	Ն	Բ		
Ա	Թ	Մ	Ե	Ս	Ե
Ն	Ն	Ա	Պ	Տ	Ր

Լուծեցին, Կ. Պ. Ի. — Մանուշակ Կ. Տէր Աբրահամեան, Արտուր Ս. Տէր Աբրահամեան, Նուարդ Ա. Գաբրիէլեան, Բիւզանդ Ա. Գաբրիէլեան, Գոթեֆ Հայկազն, Ա. Գ. Գաբրիէլեան, Դաւիթ Փաշայեան, Գոթեֆ Գոթեֆեան, Ե. Ա. Գաբրիէլեան, Ա. Պ. Ի. — Ստեփան Ռ. Գեբեթեան: Արտուր — Տեղաւոր Մ. Միսուհեան: Մ. Ա. Ի. — Տոնապետ Խաչատուրեան, Պոզոս Կարապետեան, Խամաէլ Գոթեֆեան, Խարայէլ Տէր Գոթեֆեան: Թ. Լ. — Բարսեղ Տէր Բարսեղեան, Կ. Ի. — Գրեգոր Մ. Խաչատուրեան: Վ. Լ. — Միհրան Մ. Տ. Սարգիսեան: Նե-ուրե-ուրե (Ա. Բ. Բ. Բ.):



ՀԱՆՆԵՆՈՒԿ ՍՈՒՐԲ ԳԻՐԲԷՆ

0
0
0
0
0
0
0
0
0
0

1. Օգտակար կենդանի մը.
2. Կղզի մը որուն ճամբէն անցաւ Պոզոս.
3. Երկնային Նշանակող բառ մը.
4. Կիւրք մաս մը (աջէն ձախ).
5. Մարգարէ մը (աջէն ձախ).
6. Բառ մը որ ճշմարտութիւն կը նշանակէ.
7. Ածական մը, որ երբեմն հոգևոր պաշտմաններու տիրոջն է.
8. Եւրոպական ցեղ մը.
9. Յուդայի թագաւորներէն մէկուն Տորաքոս անուան առաջին երկու վանկերը.
10. Պատուական քար մը (աջէն ձախ).
11. Խարայէլի թագաւորներէն մին:

Եթէ այս նշանականները կարգաւ շարքերաբար տակ, զոնքերով ձեռացած սիւները վերէն վար ձախէն ալ պիտի կարգաւ ժամանակի վաճառելու շարժանքութիւն մը:

Թալաս ԲԱՐՍԵՂ ՏԵՐ ԲԱՐՍԵՂԵԱՆ

Տարեկան բաժանորդագին 6 դահ. արծաթ, կանխիկ, ամէն տեղւոյ համար:

Ամերիկայի Մեծիտալոց Ընկերութեան կողմէն «Արտոնատէր ձ. Բ. Կիրի» Տնօրէն—Խմբագիր Հ. Ս. ՊԱՐՆԸՄ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
 Ի ԳԱՐԱՆԻ Ա. ԵԱՌԱ ԳՈՅԱՅԱՆ
 Ֆինանսները Եօզուշու, Ամերիկայի Խան